Արձանագրություն N 2

Ազգային ժողովի կարիքների համար հորատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԽԾՁԲ-23/3 ծածկագրով ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Մ. Բաղրամյան 19 10.08.2023թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Լևոնյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մամբրեյան, Ն. Հարությունյան, Մ. Սամսոնյան*, Տ. Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Հովհաննիսյան

**Նիստին բացակայում էր Հանձնաժողովի անդամ Մ. Սամսոնյանը*

Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայությունների գինը (ՀՀ դրամ)
1	Ազգային ժողովի կարիքների համար հորատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	1500000

1 Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps /www.armeps.am/ համակարգի միջոցով 2023 թվականի օգոստոսի 10-ին ժամը 15:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«ԷՅ ՔԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	ք. Հրազդան, Շինարարների փող. 70	/+374/ 55995995	agtproject 2019@mail.ru

3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից Հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

4. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակիցներ	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/		
		Գնի առաջարկն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	1500000	-	1500000

6. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

10.08.2023թ. ժամը 15:30-ին կայացած նիստում Հանձնաժողովն ուսումնասիրելով «ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ արձանագրեց, որ հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես հրավերի I մասի 2.3.1 կետի

- «Մասնագիտական փորձառություն» չափանիշի «ա» և «բ» պարբերությունների պահանջով՝ հայտից բացակայում է ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու վերաբերյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով բացակայում է Մասնակցի կողմից ներկայացված աշխատակիցների աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին: Միաժամանակ հայտնում ենք, որ մասնագետ Մամիկոն Բալաբեկի Ղազարյանի անձնագրի ժամկետը ավարտվել է 12.11.2022թ./013 կողմից տրված/, ինչպես նաև ներկայացված չէ «ա» պարբերությամբ նշված մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ առաջարկելով, Ընթացակարգի մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել Պատվիրատուի (համակարգողի)՝ gnumner@parliament.am էլ. հասցեին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 15.08.2023թ. ժամը 11:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տեղեկություն՝ հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 15.08.2023թ. ժամը 11:30-ին: Նիստին ներկա էր նաև Հանձնաժողովի անդամ Մ. Սամսոնյանը: Հանձնաժողովն արձանագրեց, որ Ընթացակարգի մասնակից՝ «ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում շտկել է փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց «ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

9.2 Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

9.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

9.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Լ. Լևոնյան

անդամներ՝ _____ Վ. Մամբրեյան

_____ Ն. Հարությունյան

_____ Մ. Սամսոնյան

_____ Տ. Բաղալյան

քարտուղար՝ _____ Ռ. Հովհաննիսյան